

Երեկոյան Ժամեր
Աստծո Հետ՝ Օրը 24 Ժամ
Մաս 3

**Աստծո հետ օրը 24 ժամ ապրելու գաղտնիքը-
Մոռանալ իդեալականությունը և գնալ դեպի
իրականությունը:**

*«Արդ Աստծու ողորմածությամբ աղաչում եմ ձեզ,
եղբայրներ իմ, որ ձեր մարմինները մատուցեք կենդանի
զոհ՝ սուրբ և աստվածահաճո. դա է ձեր հոգևոր
պաշտամունքը:» Հռոմեացիներին 12:1*

Բաժնեկցի -

Ժամանակ հատկացրու փոխհարաբերություններին:

*«Ինչպես ուզում եք, որ մարդիկ ձեզ անեն, նույնն էլ
դու իք արեք նրանց:» Ղուկաս 6:31*

*«Ոչինչ մի՛ արեք հակառակությամբ և ոչ էլ
սնապարծությամբ, այլ խոնարհությամբ մեկը մյուսին
թող իր անձից ավելի լավ համարի: Միայն ինքներդ ձեր
շահերը մի՛ փնտրեք, այլ ամեն մեկն իր ընկերոջինը
նս:» Փիլիպպեցիներին 2:3-4*

*«Գոհություն եմ հայտնում իմ Աստծուն ամեն անգամ,
երբ ձեզ հիշում եմ:» Փիլիպպեցիներին 1:3*

Ուրախացի - Ժամանակ հատկացրու զվարճանալու:

*«Տիրոջ աչքի առաջ են մարդու ճանապարհները, և նա
քննում է նրա բոլոր ուղիները:» Առակներ 5:21*

*«Ուրեմն ուտեք թե խմեք, ինչ գործ էլ որ անեք, ամեն
բան Աստծու փառքի համար արեք:»*

Ա Կորնթացիներին 10:31

*«Ամենից ավելի քո սի՛րտը պահիր զգուշությամբ,
որովհետև նրանից է կյանքի աղբյուրը:» Առակներ 4:23*

Հանգստացիր - Ժամանակ հատկացրու քնելուն:

*«Ես խաղաղությամբ պիտի պառկեմ ու քնեմ, որովհետև
դու ես միայն, ո՛վ Տեր, ապահովությամբ բնակեցնում
ինձ:» Սաղմոսներ 4:8*

*«Զուր է ձեզ համար կանուխ վեր կենալը, ուշ
հանգստանալը. դուք հացը ցավով եք ուտում. ինչո՞ւ
որովհետև նա իր սիրելիին է քունը տալիս:»*

Սաղմոսներ 127:2

Վերալիցքավորվիր - Ժամանակ հատկացրու քեզ:

*«Իսկ նա (Հիսուս) հեռանում էր ամայի տեղեր և
աղոթում:» Ղուկաս 5:16*

*«Մինչ իմ հոգսերն իմ սրտում շատանում են, քո
մխիթարություններն ուրախացնում են ինձ:»*
Սաղմոսներ 94:19

*«Դրա համար չենք վհատվում: Թեև մեր արտաքին
մարդը քայքայվում է, բայց մեր ներքին մարդն օրեցօր
նորոգվում է:» Բ Կորնթացիներին 4:16*

*«Իսկ եթե մեկը Քրիստոսի մեջ է, նոր ստեղծված է.
հներն անցան, ահա ամեն բան նոր եղավ:»*
Բ Կորնթացիներին 5:17